

ԵՐԳԵՑՈՂՈՒԹԻՒՆՔ ԱՐԵՒԱԳԱԼԻ, ԽԱՉԱՊԱԿԱՆԻ ԵՒ ՀԱՆԳԱՍՏԵԱՆ ԺԱՄԵՐԳՈՒԹԵԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻՈՅ

ՓԱՐԻԶ 1991

REL-L
ANON
1991



ԵՐԳԵՅՈՂՈՒԹԻՒՆՔ
ԱՐԵՒԱԳԱԼԻ, ԽԱՂԱՂԱԿԱՆԻ
ԵՒ ՀԱՆԳՍՏԵԱՆ
ԺԱՄԵՐԳՈՒԹԵԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ
ԵԿԵՂԵՑԻՈՅ

ՓԱՐԻԶ 1991

Հրամանաւ՝

Տ. ԳԻՒՏ ԱՐՔԵՊՍ. ՆԱԳԳԱՇԵԱՆԻ

Կաթողիկոսական Պատուիրակ Եւրոպայի

եւ Առաջնորդ Հայոց Փարիզի



Օրհնեալ Տէր մեր Յիսուս Քրիստոս. ամէն։

Հայր մեր որ յերկինս ես, սուրբ եղիցի անուն քո։ Եկեսցէ արքայութիւն քո, եղիցին կամք քո որպէս յերկինս եւ յերկրի։ Զհաց մեր հանապազորդ տուր մեզ այսօր։ Եւ թող մեզ զպարտիս մեր, որպէս եւ մեք թողումք մերոց պարտապանաց։ Եւ մի՛ տանիր զմեզ ի փորձութիւն, այլ փրկեա զմեզ ի չարէ։ Զի քո է արքայութիւն եւ զօրութիւն և փառք յաւիտեանս. ամէն.

ԵՐԳԵՑՈՂՈՒԹԻՒՆ

ԱՐԵՒԱԳԱԼԻ ԺԱՄԵՐԳՈՒԹԵԱՆ

Կարգաւորութիւն հաւատակաց աղօթից Արեւագալի ժամուն, որ կատարի ի դէմս Հոգւոյն Սրբոյ, այլ եւ ի դէմս Յարուբեանցն Քրիստոսի, որ երեւեցաւ աշակերտացն:

Ելիցի անուն տեառն օրհնեալ յաւիտեան, զի յառաջ քան զարեւ է անուն նորա:

Ի նա օրհնեցին ամենայն ազգք երկրի, և ամենայն ազինք երանիցեն նմա: Օրհնեալ տէր աստուած իսրայելի, որ առնէ սքանչելիս միայն. եւ օրհնեալ է անուն սուրբ փառաց նորա յաւիտեան. լցի փառօք նորա ամենայն երկիր. եղիցի եղիցի:

Փառք Հօր եւ որդւոյ եւ:

Այժմ եւ միշտ. եւ եւս յաւիտեան:

Օրհնութիւն եւ փառք Հօր եւ:

ԱՐԵՒԱԳԱԼԻ ԺԱՄ

Երգ Արեւագալին

Յարեւելից՝ ի մուտս. ի հիւ- պկ
սիսոյ ել ի հարաւոյ. ամենայն աղբ
ել ածկնք, յօրհնութիւն նոր օրհ-
նեցէք զարարչէն արարածոց, որ ծա-
եաց ըզլոյս արեգական՝ այսօր ի յաշ-
խարհս:
Ելեալ՝ յարոյն. փառաբանիչք
ամենասրբ երրորդութեանն. յա-
ւաւօտս լուսոյ զառաւօտ խորհրդու-
թեան քրիստոս գոհեցէք ընդ հօր եւ
հոգւոյն, որ ծագեաց ըզլոյս գիտու-
թեանն իւրոյ ի մեզ:

Յորդորակ

Յարեւելից յարեւմուտս մինչեւ
սմանկ. օրհնեցէք միշտ անդադար
զծագողն լուսոյ:
Ելեալ՝ յարոյն փառաբանիչք.
բարեբանեցէք զի ետ զիմաստս լու-
սոյ:

ԱՐԵՒԱԳԱԼԻ ԺԱՄ

Քարոզ

Յարեւելից մինչեւ ի մուտս արեւու ընդ ամենայն տեղիս քրիստոնէութեան, ուր և կարպան զանուն տեառն սրբութեամբ, տէր ազօթիւք նոցա և բարեխօսութեամբն մեզ ողորմեացի։ Ուխտիւք զաստուած ազաչեսցուք, զի նա փրկեսցէ զմեզ ի մեղաց և ի ցանկութենէ աչխարհի։ Ընկալցի զուխտս և զինդրուածս սրտից մերոց. և արժանի արասցէ զմեզ հաւատոյ եւ պատուիրանաց իւրոց ընդ ամենայն սուրբս իւր։ Ամենակալ տէր աստուած մեր կեցո եւ ողորմեա։ Զաւուրս մեր եւ զտաջիկայ օրս խաղաղութեամբ անցուցանել՝ հաւատով ի տեառնէ խնդրեսցուք։

Զհրեշտակ խաղաղութեան պահպանիչ։
Զքաւութիւն և զթողութիւն յանցանաց։
Զսրբոց խաչին մեծ և կարող զօրութիւն։
Եւ եւս՝ միաբան ուխտիս ճշմարիտ եւ։
Զանձինս մեր և զմիաբանս տեառն։
Ողորմեաց մեզ, տէր աստուած մեր։

ԱՐԵՒԱԳԱԼԻ ԺԱՄ

Աղօթք

Յարեւելից մինչեւ ի մուտս արեւու օրհնեալ ես, տէր. վասնզի Թագաւոր քաղցր ես. և անուն քո ահեղ է ընդ ամենայն տիեզերս: Քաղցրացին սաղմոսերգութիւնք մեր առաջի քոյ. եղիցեն իրաւունք յարդարութիւնք քումք ի տկարութիւնս մեր, եւ փառաւորեսցի ամենասուրբ անուն քո: Եւ մեք արժանի եղիցուք կալ ի պատուիրանի քում. և քեզ երգել զօրհնութիւն և զփառս հօր և որդւոյ և հոգւոյդ սրբոյ. այժմ և միշտ և յաւէտ:

Խաղաղութիւն ամենեցուն:
Առաւծոյ երկիրպագեսցուք:

Առաւած մշտնջենաւոր, առաւած յաւիտենական, որ ի սկզբան աշխարհս լոյս ծագեցար, և լուսաւորեցեր զմեզ ի խաւարային մեղաց մերոց: Որ վասն մեր ի չափաւորութիւն եկիր, անչափդ առաւած. եւ հեղեալ ծաւալեցեր

զչնորհս Հոգւոյդ սրբոյ յարարածս քո։ Ա՛յժմ եւ յաւիտեանս ժամանակաց բարեբանեալ ես, ամենամեծդ աստուած, ընդ Հօր եւ ամենասուրբ Հոգւոյդ. այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն։

Սաղմոս Ղ.

Ա՛պաշխեցէք առ տէր ամենայն երկիր, ծառայեցէք տեառն ուրախութեամբ։

Մտէք առաջի նորա ցնծութեամբ, ծանեարուք զի նա է տէր աստուած մեր։ Նա արար զմեզ և ո՛չ մեք էաք, մեք ժողովուրդք և խաշն արօտի նորա։

Մտէք ընդ դրունս նորա խոստովանութեամբ, և օրհնութեամբ ի յարկս նորա։

Խոստովան եղերուք տեառն, եւ օրհնեցէք զանուն նորա։

Քաղցր է տէր, յաւիտեան է ողորմու-

Թիւն նորա. ազգէ մինչև յատպ է ճըշ-
մարտութիւն նորա։
Փառք հօր եւ. Ա յժմ եւ միշտ եւ։

. Երգ

Ձըգնաւո՛ր ըք ամառնոյ, եւ ժառանգ դկ
պտղոց երկնից ամբարտաւանեան. ո՛ՉՀՎ ըք
փոխանակեալը զանցաւորս՝ առիք
զանա՛նցն բարո՛ւթիւնան. բարեխօսե-
ցէ՛ք ամե՛ն տէր վասն մանկանց եկե-
ղե՛ցւոյ։
Նահատա՛կք պա՛նծալիք, եւ սիրե-
ցեալք ի յե՛րկնաւոր հօրէն. ո՛ՉՀՎ ըք
մըկըրտեցայք ընդ քրիստոսի արեամբ
ձերո՛վ ի մահ խա՛չին. բարե։
Մարտիրո՛սք ցա՛նկալիք, եւ օմե-
վանք հոգւո՛յն ճըշմարտո՛ւթեանն.
ո՛ՉՀՎ ըք յաղթեցիք հոգւով կարեա՛ց
եւ ցանկո՛ւթեան. բարե։
Գովելի՛ք աշխարհի, եւ բաղձալիք

վերնոցըն պետռնէութեանց. ո՛ՒՎ ըք երա-
նուելեան մասին հասիք քան զամե-
նայն ուրիս մարդկան. բարե։
Կամաւո՛ր պատարագք, մանկունք
տիօք և կատարեալք իմաստռնէութեամբ.
ո՛ՒՎ ըք փոխանակ կամին արբիք զդի-
նի՛ն զմայլեցու՛ցիչ. բարե։

Ցորդորակ

Ձի՛գնաւորըք ճըշմարիտք վըկայք
քրիստոսի. բաժեխօսեցէ՛ք առ տէր
վասն անձանց մերոց։
Նահատակըք կենդանիք սիրողք
քրիստոսի. ոյք չարչարեցայք մար-
մնով վասն անուանն տեառն։
Մարտիրոսըք ցանկալիք մարդկան ըն-
ձալիք. հայցեցէ՛ք ի տէրըն Յոգւոյն
տալ մեզ ընդարձակ։
Գովելիք վերնոց դասուց. պարծանք
աշխարհի. խընդրեցէ՛ք զխաղաղու-
թիւն տալ եկեղեցւոյ։

*Կամաւոր սուրբ պատարագք հաճա-
կաւ մանկունք. հայցեցէք լինիլ ևս
մեզ՝ ձեզ պատակից։*

Մաղթանք

*Աղաչեմք ողորմեաց, տէր բարեբար,
աղաչեմք ողորմեաց. վասն աղօթից
սրբոց ձգնաւորացն՝ աղաչեմք ողոր-
մեաց։*

Քարոզ

*Սուրբ ձգնաւորքն աղաչեացուք զա-
տէր, որք զչարան պարտեցին, նեղու-
թեանցն համբերեցին, լուսեղէն ևս
երկնային անթառամ պսակացն ար-
ժանի եղեն։ Աղօթիւք նոցա և բարե-
խօսութեամբ մեզ ողորմեացի։ Ամե-
նակալ տէր աստուած մեր. կեցո ևս
ողորմեա։*

Աղօթք

Սուրբ ես տէր, և ի սուրբս հանգու-

ցեալ. եւ մեք սուրբ վկայիւքս ապաչեմք զքեզ. բարեխօսութեամբ սուրբ աստուածածնին և ապաչանօք ամենայն սրբոց քոց. մի՛ մերժեր զմեզ յօտարմութենէ քումմէ, այլ կեցո զմեզ ա՛ղօթիւք սոցին. զի դու ես բազում՝ ողորմ աստուած. եւ քեզ վայել է փառք իշխանութիւն և պատիւ. այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից. ամէն:

Ի Սարկաւագ վարդապետէն ասացեալ:

Յիշեա, տէր, զպաշտօնեայս քո, զեպիսկոպոսն մեր, զվարդապետս, զեղբարս, զքահանայս, զկերակիրսդ, զանապարհորդս, զհանգուցիչս, զվաստակաւորս, զիոստովանողս զապաշխարողս, զգերիս, զհիւանդս, զնեղեալս, զիշխանս, զչարչարեալս, զբերեալս, զմշնամիս, զատելիս. և զոք պատուիրեցին մեզ հաւատով:

Յիշեա տէր եւ ողորմեա:

Բարեբար և բազումողորմ աստուած, զի անմուաց գիտութեամբդ և անբաւ մարդասիրութեամբդ յիշեա զամենայն հաւատացեալս ի քեզ, և ողորմեա ամենեցուն։ Օգնեա եւ փրկեա յիւրաքանչիւր վտանգից և ի փորձութենէ։ Արժանաւորեա զոհութեամբ փառաւորել զՅայր և զորդի և զսուրբ Հոգիդ, այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից. ամէն։

Կանոն Ա՛.

Աստուած, աստուած իմ, եւ առ քեզ առաւօտս առնեմ. ծարաւեաց առ քեզ հոգի իմ, բանիցպատուիկ եւս և մարմին իմ։

Որպէս երկիր անապատ և անջուր, որ ոչ գոյ ի նմա ձմեռոպարտ։

Այսպէս ի սուրբ երեւեցայց քեզ, տեսանել ինձ զզօրութիւն քո եւ զփառս քո։

Վասն զի լաւ է ինձ ողորմութիւն քո քան զկեանս իմ. և շրմունք իմ գոհասցեն զքեզ։

Լռեայ, սրտիկս լուսոյ, առաջի՛ն լոյս. զձ
իմանալեա՛ց ի լոյս յանմատոյց, հայցի
երկնաւոր, ի պատուց լուսե՛ղինացն
օրհնեալ, ի ծագել լուսոյ առաւօ-
տուս, ծագեա ի հոգիս մեր ըղձայս քո
լիմաստալի։

Լռեայ, ի լուսոյ ծագումն, արեգա՛կն
արդար. անձա՛ւրդ ծընո՛ւնդ հօր սրտի.
յառաջ քան զարեւս անուն քո՛ գով
եւս ընդ հօր. ի ծա։

Լռեայ, ի հօրէ բղխումն, սքեսու քա՛ջ
բուխման. հոգի՛ւդ սուրբ առաք-
ծե՛ց. մանկտունք եկեղեցւոյ ընդ հրեշ-
տակս գով՛ զքեզ բարեբանեն. ի ծա։

Լռեայ, երկեակ եւս մի մնդամժա՛նելի
սո՛ւրբ ե՛ւ լրմնդատուխման, զքեզ ընդ
երկնայինսդն ե՛ղկրտածքեցս մի՛շտ փա-
ռա՛տրեմք. ի ծայել։

Յորդորակ

Ո՛նեզանելիդ աստուած, հայցս ամե՛նայն
նախայ. ընկալ զաղաչանս մեր քո՛ց
պաշտօնէից։
Ի՛ հօրէ ծագումն անճառ, արեգակն
արդար. ծա՛գեա ի յանձինս մեր
զլոյսդ ողորմութեան։
Ի՛ հօրէ բղխեա՛լ հոգի, աղբիւր բա՛ռ
բանին. լո՛ւսով քով լցո՛ւ ընկալեալ
յայսմ առաւօտուս։
Երե՛ք անձինք եւ մի՛ բնութիւն, մի՛
աստուածութիւն, զքե՛զ խոստովա՛
նիմք յաւէտ սո՛ւրբ երրորդութիւն։

Մաղթանք

Լո՛ւսով քո, քրիստոս, ամենեքեան
լուսաւորեցար, և ի սուրբ հայր քո,
վրկիչ, հաւատացեալքս սպասինե՛
ցար։ Լո՛ւր մեզ, աստուած վրկիչ մեր.
սուր մեզ զխոստովանութիւն քո. և
սրա սո՛ւրբ մեզ զպտղութիւն քո, մաս՛
դասէր սէր։

Քարոզ

Եւ եւս խաղաղութեան։ Փառաւորեցուք զամենակալն աստուած, որ ծագեաց զլոյս առաւօտու յարարածս իւր. ծագեցէ եւ այժմ զառաջ ողորմութիւն իւր ի վերայ փառաբանչաց անուան իւրոյ։ Ամենակալ տէր աստուած մեր, կեցո եւ ողորմեա։

Աղօթք

Ցառաւօտու աղօթս եւ գիանաւորս պաշտօնս, ընկալ ամենակալ ամենամեծդ աստուած, ի քո անապական եւ յերկնային խորանդ։ Ծագեա առ մեզ զարդարութեան եւ զիմաստութեան զլոյս քո. արա զմեզ որդիս լուսոյ եւ որդիս տուընջեան. որպէս զի ի գալ աստուա երկիւղածութեամբ վարեսցուք զկեանս մեր, և առանց պայթակղութեան կատարեսցուք։ Զի դու ես օգնական և փրկիչ մեր. և քեզ վայել է փառք իշխանութիւն եւ պատիւ. այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից. ամէն։

Սաղմոս ԻԲ.

Տէր հովուեսցէ զիս, եւ ինձ ինչ ոչ պակասեսցի:

Ի վայրի դալարուջ անդ բնակեցոյց զիս, եւ առ ջուրս հանգստեան ածոյց զիս:

Դարձոյց զանձն իմ առ իս, առաջնորդեաց ինձ ի ճանապարհս արդարութեան վասն անուան իւրոյ:

Թէպէտ և գնացից ես ի մէջ ստուերացս մահու, ոչ երկեայց ի չարէ՝ զի դու տէր ընդ իս ես:

Երգ

Ձանաչաւ պայ ես եւ ճլշմաբուսիւ
լմիւն ես կեաչնք քրիստոսով. ա-
ւաբջնորդեա հոգւոց մեծրբից.
յերկիւղ ելանել յեկեղեցիս:
Դուռըն կենաբարից մըտուց յի-
սուս. մաբայծ ես ըզմեզ աբարդ հայր
քո և հոգի. եւրգել վիշտ ըզկիսատս:

Ցորդորակ

Ձա՛նապարհ լարի՛ քրիստո՛ս եւ ճշմարտութիւն. առաջնո՛ր հոգւոց մերոց յերկիրէ ի յերկինս։ Դռնբո՛ւն կենաց մտից յիսո՛ւս. աճառուած ճշմարիտ. մոյծ և զմեզ առ հայրըդ քո՛. հոգւովըդ սրբո՛վ։

Մաղթանք

Տէր, ուղեա զգնացս մեր ի ճանապարհս խաղաղութեան. տէր, ուղղեա եւ առաջնորդեա հոգւոց մերոց եւ ամենայն հաւատացելոց, գնալ յարդարութեան ճանապարհս եւ ի կեանան յաւիտենից։

Ֆարոզ

Աղաչեցուք զամենակալն աստուած՝ զի յաջողեալ ուղեսցէ զճանապարհս ծառայից իւրոց ի բարի եւ խաղաղութիւն։ Ամենակալ տէր աստուած մեր, կեցո՛ եւ ողորմեա։

Աղօթք

Աստուած կենաց և պատուէր խաղաղութեան, քրիստոս աստուած մեր, աստուածպեա մեզ պնալ ի ձանապարհս քո արդարութեան. և խաղաղութեամբ ժամանել ի նաւահանգիստ կենաց և փրկութեան՝ չնորհօք ողորմութեան քոյ. զի դու ես օգնականն և փրկիչ մեր. և քեզ վայել է փառք իշխանութիւն և պատիւ. այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից. ամէն։

Աղօթք աւուրց պահոց, յորս ոչ լինի։

Օրհնեալ ես, տէր աստուած փրկիչ մեր, որ յամենայն ժամ ընդ մեզ ես, և ոչ երբեք թողուս ի ձեռանէ քումմէ զայնոսիկ՝ որք հաւատով և ճշմարտութեամբ կարդան առ քեզ։ Արտասեմք և խնդրեմք ի քէն, տէր, ձանապարհորդակից լեր ծառայից քոց քրիստոնէից վերակացութեամբ՝ պահելով ի խաղաղութեան. եւ աստուածպեա մեզ

Միաւանգամ խաղաղութեամբ և խնդութեամբ հասանիլ յիւրաքանչիւր ի բնակութիւնս ի քրիստոս յիսուս ի տէր մեր։

Որում վայել է փառք իշխանութիւն և պատիւ. այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից. ամէն։



ԵՐԳԵՑՈՂՈՒԹԻՒՆՔ
ԽԱՂԱՂԱԿԱՆ ԵՒ ՀԱՆԳԱՍՏԵԱՆ
ԺԱՄԵՐՈՒ



Կարգաւորութիւն հաւատակաց աղօթից խաղաղականի ժամուն, որ կատարի ի դէմս Հոգւոյն Աստուծոյ, այլ եւ ի դէմս Բանին Աստուծոյ, որ եղաւ ի գերեզմանի, եւ ել ի դժոխս, եւ խաղաղութիւն արար հոգւոցն:

Որ ընդեալ տէր մեր Յիսուս Քրիստոս. ամէն:

ՀԱՅՐ մեր որ յերկինս ես. սուրբ եղիցի անուն քո: Եկեսցէ արքայութիւն քո. եղիցին կամք քո որպէս յերկինս եւ յերկրի: Զհաց մեր հանապազորդ տուր մեզ այսօր: Եւ թող մեզ զպարտիս մեր, որպէս եւ մեք թողումք մերոց պարտապանաց: Եւ մի՛ տանիր զմեզ ի փորձութիւն. այլ փրկեա զմեզ ի չարէ: Զի քո է արքայութիւն եւ զօրութիւն և փառք յաւիտեանս. ամէն.

Ի նեղութեան իմում եւ աս տէր կարդացի, և լուաս ինձ տէր. փրկեաց զանձն իմ ի շրթանց նենգաւորաց և ի լեզուէ չարէ։
Ձի՞ տացի քեզ կամ զի՞նչ յաւելցի, լեզու նենգաւոր։

Չկանոնն բովանդակ ասա։ Բայց ոմանք ալէլու չասեն, զի երգ աստիճանաց է։

Սաղմոս ՁԷ.

Տէր աստուած փրկութեան իմոյ, ի տուէ կարդացի և ի գիշերի առաջի քո։ Մտցեն աղօթք իմ առաջի քո, տէր, խոնարհեսցի ունկն քո ի խնդրուածս իմ։

Փառք Հօր։ Ա. յժմ եւ միշտ։
Եւ եւս խաղաղութեան վտէր աղաս։
Օրհնութիւն եւ փառք Հօր եւ որդ։

Խաղաղութիւն ամենեցուն։

Սաղմոս Դ.

Ի կարդալ իմում լուար ինձ, աստուած, լսո արդարութեան. ի նեղութեանէ ինձ անբաւ արարեր, ողորմեա ինձ և լուր աղօթից իմոյ:

Որդիք մարդկան մինչև յե՞րբ էք խստասիրտք. ընդէ՞ր սիրէք զնանութիւն, և խնդրէք զստութիւն:

Ծաներուք զի սքանչելիս արար տէր սրբոյ իւրում. և տէր լուիցէ ինձ ի կարդալ իմում առ նա:

Բարկանայք և մի՛ մեղանչէք, զոր ինչ ասէք ի սիրտս ձեր՝ յանկողինս ձեր զղջացարուք:

Երգ

Ընդունեա՛ մեզ տէր, ի գիշերի զերկնային զհատակութիւն քո. եւ պահեա զմեզ ի պատրանաց խնամոյն՝ ամենայնիւ զօրութեամբ սուրբ խաչն քոյ: Տէր աստուած փրկութեան իմոյ՝ ի տուէ կարպացի եւ գիշերի առաջի քոյ: Մտցեն աղօթք իմ առաջի քոյ տէր. խոնարհեացի ունկն քո ի խնդրուածս իմ: Եկեսցէ առ

մեզ տէր պահապան ի քէն, եւ պահեսցէ զմեզ յաւիտեան ժամ: Աղաչեմ ի մեզ տէր զզօրութիւն սրբոյ խաչին, որ պահեսցէ զմեզ յաւիտենայն ժամ: Արժանի արա, տէր, զբեկս զայս խաղաղութեամբ, եւ առանց փութձութեան անցս ընծեօք: Արժանաւորեա, տէր, զգիշերս զայս խաղաղութեամբ եւ առանց մեղաց պահելով զմեզ: Ընդ մեզ տէր առաուած, գիտացիք հեթանոսք և պարտեցարուք, զի աստուած ընդ մեզ է: Եւ լուարուք զայս ի ծագաց մինչեւ ի ծագս երկրի, զի: Եւ հզօրացեալքդ պարտեցարուք, զի: Եւ զի թէպէտեւ դարձեալ զօրանայք՝ դարձեալ ի պարտութիւն մատնեսջիք, զի: Եւ զխորհուրդն զոր խորհիք՝ խափանէ տէր, զի: Եւ բզեանն զոր խօսիք՝ մի՛ ճեռացէ առ ձեզ, զի: Եւ քանզի յերկիւղէ ձերմէ մեք ո՛չ երկիցուք, և ո՛չ խռովիցո՛ք, զի: Եւ բզտէր աստուած մեր փառաւոր արասցուք, եւ նա եղիցի մեզ յերկիւղ, զի: Եւ յուսացեալ

եղիցուք մեք ի նա, եւ նա եղիցի մեզ
ի սրբութիւն, զի: Եւ յուսացեալ ե-
ղիցուք մեք ի նա, եւ նա եղիցի մեզ
ի փրկութիւն, զի: Եւ ահաւասիկ ես և
մանկունք իմ, զոր եւտ ինձ աստուած,
զի: Եւ ժողովուրդ որ նստէր ի խա-
ւարի՝ ետես ըզլոյս մեծ, զի: Եւ որ
քնակեալդ էք ի խաւարի և ի ստուերս
մահու, լոյս ծագեսցի առ ձեզ, զի:
Եւ քանզի մանուկ ծնաւ, որպի եւ
տուաւ մեզ, զի: Եւ որոյ իշխանու-
թիւն իւր ի վերոյ ուսոց իւրոց, զի:
Եւ որ կոչի անուն նորա մեծի խորհրդոյ
հրեշտակ, զի: Եւ սքանչելի խորհրդա-
կից, զի: Եւ աստուած հզօր իշխան,
զի: Եւ իշխան խաղաղութեան հայր
հանդերձելոյ յաւիտենից. տէր աս-
տուած ընդ մեզ է:

Եւ փառք հօր եւ որդւոյ եւ հոգւոյն
սրբոյ. այժմ եւ միշտ եւ յաւիտեանս
յաւիտենից. ամէն:

Մաղթանք

Ի մեծանալ երեկոյին՝ համբառնամք զձեռս մեր ի սրբութիւն. զոր ինչ մեղաք այսօր խորհրդով բանիւ՝ կամ գործով՝ ի յանկողինս մեր զղջանալով. խոստովան լինելով զպաղտնիս սրտից մերոց ծածկապիտիւղ աստուծոյ, յուսալով յողորմութիւն քո։ Եւ մեք միաբան գոչեսցուք. յիշեա զմեզ, տէր, յոյժամ գաս ալքայութեամբ քով, եւ ողորմեա մեզ։

Ջարոզ

Եւ եւս խաղաղութեան պտեր աղա։ Պահպանարուք զտեառնէ, որ իւրով ողորմութեամբն առաջնորդեաց մեզ ի գործս տուընջեան, եւ չնորհեաց մեզ միաբան գալ հաստանիլ ի հանգիստ գիսատ պիշերիս։ Եւ մեք յաւենայն ժամ աղաչեսցուք զմարդասէրն աստուած, լինել պահապան անձանց մերոց, եւ նա իւրով ողորմութեամբն պահեսցէ զմեզ, և առաջնորդել հաստուսցէ յիւր բարութեան հանգիստն,

զոլ խոստացաւ սիրելեաց իւրոց Ձըջ-
մարիտն աստուած յիսուս քրիստոս.
տէրն ամենակալ կեցուսցէ եւ ողոր-
ժեսցի։

Զհանգիստ գիշերոյս խաղաղութեամբ
անցուցանել հաւատով՝ ի տեառնէ
խնդրեսցուք։

Զհրեշտակ խաղաղութեան պահա։
Զքաւութիւն և զթողութիւն յան։
Զսրբոյ խաչին մեծ և կարող զօրու։
Եւ եւս՝ միաբան ևան Ճշմարիտ եւ։
Զանձինս մեր և զմիմեանս տեառն։
Ողորմեաց մեզ, տէր աստուած մեր։

Աղօթք

Տէր բարերար, որ մեծաւ գթութեամբ
քով պատրաստեցեր զյաւիտենական
հանգիստն առաքինութեամբ աշխա-
տելոցն. և կոչեցեր առ քեզ քաղցր
ձայնիւ զծանրաբեռնեալսն և զտաժան-
եալսն մեղօք, հանգիստ նոցա խոստա-
նալով։ Ընդունեա և մեզ, տէր, անխտիր
խաղաղութեամբ զգիշերս անցուցա-
նել. և ի ծանրութենէ մեղաց զաշխա-
տեալքս՝ ապահովեա ողորմութեամբ
քով. և արժանաւորեա մշտնջենաւոր

տասպտեանն ընդ ամենայն սուրբս քո։ Եւ պոհանալով փառաւորեցուք զքեզ ընդ հօր և ամենասուրբ հոգւոյդ, այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից. ամէն։

Խաղաղութիւն ամենեցուն։
Աստուծոյ երկիրպագեսցուք։

Պարգեւատու բարեաց, եւ աղբիւր խաղաղութեան, տէր աստուած մեր, յամենայն աստանայական խռովութեանց խաղաղացո զմիտս մեր եւ զխորհուրդս՝ ի գիշերիս յայսմիկ եւ յամենայն ժամանակի։ Որպէս զի առաջնորդեալք յանցաւոր կենցաղոյս՝ ժամանեսցուք յաւիտենական երկնից արքայութեան քո. զոր պատրաստեցեր ի սկզբանէ աշխարհի սրբոց քոց։ Եւ ընդ նոսին պոհանալով փառաւորեսցուք զհայր և զորդի և զսուրբ հոգի, այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից. ամէն։

Սաղմոս ԻԶ.

Տէր լսայ իմ և կեանք իմ, ես յուսմէ՛ երկեայց. տէր ապաւէն կենաց իմոց, ես յուսմէ՛ պոզացայց։

Ի մերձենալ ասե իս չարաց ուտել զմսայն իմ, նեղիչք իմ և թշնամիք իմ նոքա տկարացան և անկան։

Թէ պատրաստեսցի ի վերայ իմ պատերազմ, ոչ երկիւղէ սիրտ իմ. թէ յարիցէ ի վերայ իմ ճակատամարտս, սակայն և այսուիկ ի քեզ, տէր, յուսացայ։

Երգ տեառն Ներսիսի

բձ Աչեաց սիրով հայրնդ գլխած ի քո ստեղծեալ գործըս ձեռաց. և ըղձանակս հրեշտականց տուր պահպան վեզ սրկայաց. փրկեա զանձինս ի փոյթս անց ի խաւարի չըլսոյ գիւաց. զի՞ ի տուընջեան և գիչերի տաց քեզ փառս անըմեալ։

Էլին անեղ անընկըզմաւն ծընուղ անճառ ոգի և բան. ոյ արարիչ ըզտիեզ գործոյ և ըզգիչեր ի հանգիստ քնոյ. տուր ի նլինջել աչաց մարմնոյ արթուն լինել վեզ ըստ հոգւոյ. զի՞ ի։

Բաբուն հոգւոց բանաւորաց ազբիւր լուսոյ բաշխող շնորհաց. ի փակել զբանց բնութեանց մարմնոց լոյս տուր աչաց սրտից մերոց. ի գիշերացս առ քեզ կանխել ընդ հրեղինացն օրհնաբանել. զի՛ւ ի։

Սուրբդ սրբոց երրորդութիւն զմեզ մանբութա՛ քեզ բնակութիւն. շնորհեա ընդ մանկանցն առաքաւոր հանգչել ընդ քեզ ի յանկողնի՛. տո՛ւր ընհայցուած բարեկամին զսիւխ երից նրկանակին. զի՛ւ ի։

Երեւելի լոյս ընտեղծեր զմի և զգիշեր բաժանեցեր. ծագեա մեզ տէր ի գիշերի զճառագայթս իմանալի. տո՛ւր յաւենայն ժամանակի զպահպանող աչ քո հովանի. զի՛ւ ի։

Սիրայ քո հուր ասկեալ՝ յերկիր բուրբոքեցի ի հոգիս մեր. զհոտհուրդ սրտից մեր մաքրեցէ զլոյս գիտութեան քո փայլեցէ. ի քնոյ մահո՛ զմեզ զարթնուցէ զմիտս բոցով քո վառեցէ. զի՛ւ ի։

Ի՛ քեզ նայիմք լոյսդ անմահութեդ ի զգայականն ծածկեալ լուսոյ. որ վասընն մեր եղաւր ի գբի և նըւնջեցեր ի տապանի. ա՛ռ մեզ նըւնջեա արիծուն բնութիւն հերքեա՛ զջարին ներգործութիւն. զի՛ ի։

Էի՛դ լուսոյ անըստուերի պարգատանօք կամք առաջի. որ փակեալ դրամբք յերեսիցն հրեւեցար մեծասանին. ընդ Թովմայի առ քեզ գոչեմք տէր և աստուած զքեզ դաւանեմք, էի՛դ և առ մեզ յերեկոյին և տո՛ւր զաղջոյն քո՛ ի հոգիս։

Բանեւմբք ըզքեզ տէր աղաչեմք մեզ յօգնութիւն նայեա հայցեմք. պահպանդ խրատիցըն անձանց մերոց լե՛ր հովանի. ծածեա առ մեզ խաղաղարար և նըւնջեցո՛ւք անխռովաբար. զի՛ ընդ առաւօտըս կանխեցո՛ւք օրհնել զքեզ իւնդ հօր հոգւով։

Գոչման փողոյն գաբրիէլի որ ի վերջնա՛մըն գիշերի, լըսել արար զմեզ աշխարհի և աչակոզմն օդեաց գասի. ա՛ն-դէդ վառեալ լոյս լանպտերայց ըստ իմաստո՛ւն հինգ կուսանաց. զի՛ ընդ փեսայիդ ի յառաջատ հանրսո՛ւնք հոգւով մըտցուք ի փառս։

Հաճեաց ի ինձ, տէր, նշանաւ
խաչի քո զինդիմամարտս և զաներե-
ւոյթ գազանն, եւ մի տար յափա-
կանութիւն զքո ժառանգութիւնս:
Բարեխօսեա վանքն մեր, աստուա-
ծածին մարիամ, որ ծընար զտէր ա-
տրւած՝ որ հովուերքն գիտացել ա՞ մե-
նաշօր և ըսքանչելի փառօքն իւրով:

Մաղթանք

Տէր, մի դարձուցաներ զերեսս քո
յինէն. տէր բարերար՝ աղաչեմ զքեզ,
օգնական իմ լեր: Տէր՝ մի անարգեր
զիս, եւ մի ձողուր զիս աստուած
փրկիչ իմ:

Ջարոզ

Ա՛ղաչեսցուք զամենակալն աստուած,
և խնդրեսցուք ի նմանէ, զի տացէ
ցէ զհրեշտակ խաղաղութեան, որ ե-
կեալ, պահեսցէ զմեզ յերկիւղական
պիշերիս ի դիւական խռովութենէ,
ամբողջ պահելով զհոգի եւ զմարմին
մեր միանգամ ի կատարումն ժամանակի
ամաց մերոց: Ամենակալ աստ-
ուած մեր՝ կեցուսցէ և ապրեսցի:

Աղօթք

Շնորհատու բարեաց՝ ամենայնի աւտար անմահ սէր, աղաչեմք զքեզ, փարատեա յանձանց մերոց. զաղջամղջին եւ զխաւարային խորհուրդս: Ի պատրանաց բանսարկուին պահեա զմեզ. և շնորհեա մեզ հաւատով ապաւինիլ յամենասուրբ երրորդութիւնդ, ի Հայր և յորդի և ի սուրբ Հոգիդ, այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից. ամէն:

Ցաւուրս աղուհացից ասս ասի *Ամբիծքն*, իսկ յայլ աւուրս՝ *Հայր մեր որ յերկինս*:

Սաղմոս ճԺԸ.

Երանեալ են ամբիծք ի ճանապարհի,
և որք գնան յօրէնս սեառն:
Երանի որք քննեն զվկայութիւն նորա,
բոլորով սրտիւ խնդրեսցեն զնա:
Ոչ թէ որք գործեն զանօրէնութիւն,
ի ճանապարհս նորա գնասցեն:
Դու պատուիրեցեր զպատուիրանս քո
ի պահել ինձ յոյժ:

ն զկնի ասի Շարակաւս:

Ի՛ր բեն հայցե՛մք հայր գթած զ
թեանց եւ ամոտած ընխիմեամբ
թեանց. ի տխրամեան պիշերայնի
ա՛ր գձեա՛լ ժամուս, ընխիմեալ զե-
ալ ի տրտմութեանց ալոցն, եւ
չնալհեա՛ զուրախութիւն գա՛րծակ
այգա՛րհեան. այգչանո՛ւ ա՛ր՝ք
անբ ամոտածեալն եւ ամենա՛յն
այգալոց:

Ը՛ստ բաղդատո՛յ ամոտածեալն
քո հրամանի կո՛չեմն ալգ ամոտա-
ծոյ. ե՛կեալ եմք առա՛ջի քո յե՛րե-
կոյս աչխամեալ՛ք եւ ծա՛նրաբեռ-
նեալ՛ք. թե՛թեւացո՛ւ ի ծանրութեանց
ալոցա՛ զանձինս, ե՛ղալոյ լուա-
նալ կամա՛ զբաղձալր լուծ քո տա-
ռութեանց. ալա՛:

Պ՛ատասխա՛ն առ քեզ հո՛գւով ի նա՛ն
պրատեա՛ն հասեա՛լ ժամուս, ընդա՛
ալգ նոյն ամոտածոյ. յա՛րմար նորս
գնո՛ս գե՛րեա՛ս երկրի եւ վե՛րատեն
առա՛նաա՛ գո՛գոյս մարդկան, նորոգե-

տա՛ւ պարտութիւն գնդապետին մեր
ընծայեալն ի քէն սո՛ւրբ աւազա-
նան. ապա՛շխա։

Զիե՛նդ անապիր անարատ ծընո՛ղ քո
սրիանո՛վք առաջի անխափան տէ-
րո՛ւթեան քո. յորժամ գան փա՛-
ւօք հօր գամել զմեզ ընդ խա՛չի քո.
ներեա՛ յանցանաց մերոց բարե-
խօսութեամբ մօր քո՛ եւ կո՛ւսի. ազա՛-
չենք ընդե՛ր տէր պահպանեա՛ զգա-
ւեզ ընդ հովանեա՛ւ խաչի քո՛ սո՛ւրբ։

Հանդո՛ւրս ասա՛ եւ զմե՛զ տէր, ընդ
սրտից քոց սո՛ւաքելոցն, որք սիրա՛նք
հղե՛ն տեսանել զքե՛զ ի յարու-
թեա՛ն քո. սիրանաւորեա տե՛ա՛ր
տեսանել զքե՛զ ի վերադարձ քո՛
գոհանա՛ն. օրհնութիւն առաքո-
ղի՛ն ի բարձո՛ւնս։

Ի՛ նըմտիլ քո յատենի դա՛տաւո՛ր
ահե՛ղ. ապա՛չանօք սո՛ւրբ ա՛ստուա՛ծամե-
նին յիշեա զնո՛ր ցեղի՛ն մեր, յոր-
ժամ գայցես ա՛նձա՛ւ փառօք. քանզի
քո՛ են փա՛ա՛ռք յաւիտեանս.
ամե՛ն։

Մաղթանք

Հոգւոյն հանգուցեալոյ, քրիստոս առաւած, ա՛ռ հանգիստ եւ պարտմութիւն, եւ մեզ մեղաւորացս հնարհեա պմպտութիւն յանցանաց։

Քարոզ

Եւ եւս խոստովանութեան պէտ ա՛ռ։ Վասն հանգուցեալ հոգւոյն առաքեալդ քրիստոսիդ մեր քրիստոս՝ զի պնուա ընդ արդարսն դասեցէ. եւ զմեզ կենդանացէ հնարհիւ պարտութեան իւրոյ։ Ամենակալ տէր աւաւած մեր, կեցո եւ պրպմեա։ Տէր պրպմեա. տէր պրպ. տէր պրպ։

Աղօթք

Քրիստոս պրպ աստուածդ անոխակալ եւ բարեպարգ, դնդա զի արարչական սիրով ի հոգիս հանգուցեալ ծառայից քոց։ Ջնջեա յաւուր մեծի գալստեան ա՛ւրհնութեան քոյ։ Ա՛րա արժանի առնել պարտութեան, քաւութեան եւ թողութեան մեղաց։ Գաստատեալ պահ ծառայից ընդ սուրբս քո յաջակողմանն

պատուն։ Չի պտ- եա տէր եւ արարիչ
ամենեցուն. պատուր կենդանեաց
եւ մեռելոց։ Եւ .քեզ վայել է փառք
իշխանութիւն եւ պատիւ, այժմ եւ
միշտ եւ յաւիտեան յաւիտենից.
ամէն։

ՀԱՄԱՐԱԿՈՒՄ

Պարգեւորութիւն նոտարական ոտօքից Հանկստեան
Փամուճ, որ կատարի ի դեմս Հօր Աստուծոյ,
զի պահպանողական աջով Միածնին
պահեցէ զմեզ ի խաւարային փետրիս:

Լաւութեա ակր պետս բո եւ զճշմար-
տութեան բո, զի ատաչնորդեացեն ինձ
եւ հանցեն զիս ի լեառն սուրբ եւ
ի յարկս բո:
Մարդ առաջի անգութ սատանայ առ
սատակած, որ ուրախ առնէ զմանկտա-
լին իմ:
Խաղաղեան եղիցի քեզ օրհնութեամբ,
սատակած սատակած իմ:
Արդ՝ ընդէր տրտում ես անձն իմ,
կամ ընդէր խռովես զիս. յուսա ա-
սատակած, խոստովանեա նմա՝ փրկիչ
երեսաց իմոց սատակած է:
Փառք Հօր: Ա յժմ եւ միշտ:
Եւ եւս խաղաղութեան պետէր ասա:
Օրհնութիւն եւ փառք Հօր եւ:

Սաղմոս ՃԺԸ.

Եկեսցէ ի վերայ իմ պարտութիւն քո, տէր, եւ վրկութիւն քո ըստ բանի քում:

Տաց պատասխանի այք նախատեն զիս բանիւք, զի ես ի բանս քո յուսացայ:

Մի՛ ի բացեայ առնէր ի բերանոյ իմմէ զբան ճշմարտութեան մինչեւ յոյժ, զի յիրաւունս քո յուսացայ:

Պահեցի զօրէնս քո յաւէնայն ժամ, յաւիտեան եւ յաւիտեանս յաւիտենից:

Գնայի ես յանդարտու, զի զպատուիրանս քո խնդրեցի:

Խօսէի վկայութիւնս քո առաջի թագաւորաց, եւ ոչ ամաչէի:

Խորհէի ի պատուիրանս քո զոր սիրեցի:

Համբարձի զձեռս իմ ի պատուիրանս քո զոր սիրեցի, եւ խորհէի յարդարութեան քում:

Յիշեա զբան ծառայի քո, յոր եւ յուսացուցեր զիս:

Սա մխիթարեցեալ զիս ի խոնարհութեան իմում, զի բան քո կեցոյց զիս:

Անբարուրութիւնք անիրաւեցան յիս յոյժ, այլ օրինաց քոց ես ոչ խոտորեցայ:

Յամենայն ներումն իմում վրկեցեր զիս, և ի լճէնամիս իմ եառեր անկն իմ։
Օրհնեալ ես դու, տէր աստուածդ Իսրայէլի վերոյ, գովեալ և մատեալ յաւիտեանս։
Եւ օրհնեալ է անուն սուրբ փառացդ, գովեալ և առաւ։
Օրհնեալ ես ի տաճարի փառացդ սրբութեան քո, գովեալ և առաւ։
Օրհնեալ ես ի վերոյ աթոռոյ արքայութեան քո, գովեալ և առաւ։
Օրհնեալ ես որ նայիս ի յերկիր և առնես դայն յանդունդս, գովեալ և առաւ։
Օրհնեալ ես ի վերոյ հաստատութեան երկնից, գովեալ և առաւ։
Օրհնեցէք զաստուած ի սրբութեան նորա, օրհնեցէք զնա ի հաստատութեան զօրութեան նորա։
Օրհնեցէք զնա ի զօրութեան նորա, օրհնեցէք զնա ի բազում մեծութեան նորա։
Օրհնեցէք զնա ի ձայն օդհնութեան. օրհնեցէք զնա տապտոիւք և օրհնութեամբ։
Օրհնեցէք զնա ցնծութեամբ, գովեցէք զնա ուրախութեամբ։

Օրհնեցէք զնա ի բանս քաջդի, պահեցէք զնա ի բարութեան լեզուի:

Օրհնեցէք զնա ի ձայն գոհութեան, աւետեան հոգւով օրհնեցէք զտէր:

Արդ՝ արձակեա զծառայս քո, տէր, ըստ բանի քում ի խաղաղութիւն. զի տեսին աչք իմ զփրկութիւն քո, զոր պատրաստեցեր առաջի աւետեան ժողովրդոց:

Լոյս յայտնեցեալ հեթանոսաց, եւ փառք ժողովրդեան քում Իսրայելի:

Զգեցեր զձեռն քո և փրկեաց զիս աջ քո, և տէր Տառապեալ ընդ իմ:

Տէր, ողորմութիւն քո յաւիտեան, զործս ձեռաց քոց մի՛ անտես առներ:

Տէր, հան ի բանտէ զանձն իմ, գոհանալ զանուանէ քումմէ:

Եւ քեզ սպասեն արդարք մինչեւ հատուցանես:

Մեծացուցէ անձն իմ զտէր, և ցընծասցէ հոգի իմ աստուածով փրկչիւ իմով:

Ահա արար ի վերայ խոնարհութեան աղախնոյ իւրոյ. այսուհետեւ երանելի զինեն ինձ աւետեան ազգք:

Արար ընդ իս մեծամեծս հզօրն, եւ սուրբ է անուն նորա:

Աղաւնւոյն արար ազգաց յազգս երկիւղածաց իւրոց, արար զօրութիւն բազկաւ իւրով:

Ցրուեաց զամբարտաւանս ի մտաց սրտից, և քակեաց զՀզօրս յաթոռոց:

Զխոնարհս բարձրացոյց, զկարօտս ելից բարութեամբ, եւ զմեծատունս արձակեաց ունայնս:

Պաշտպանեաց իսրայէլի ծառայի իւրոյ յիշելով զողորմութիւն իւր:

Որպէս խօսեցաւ առ հարսն մեր ընդ աբրահամու եւ զաւակի նորա յաւիտեան:

Տուր զօրութիւն ծառայի քո, կեցո զորդի աղախնոյ քո, եւ արա առ իս նշան բարութեան:

Տեսցեն ատելիք իմ և ամաչեսցեն, զի դու, տէր, օգնեցեր ինձ և մխիթարեցեր զիս:

Փառք Հօր: Ա յժմ եւ միշտ:

Մաղթանք

Աղձն իմ ի ձեռս քո է յաւետեան ժամ, և ի սուրբ խաչ քո յուսացեալ եմ, Թագաւոր երկնաւոր. զբազմութիւն սրբոց քոց բարեխօս ունիմ առ քեզ: Որ երկայնամիտ ես առ ամենեսեան, մի՛ անտես առներ զաղաչանս եալս ի քեզ, այլ պահեա պատուական և սուրբ խաչիս քով ի խաղաղութեան:

Ճարոզ

Աղաչեցուք զամենական աստուած, և խնդրեցուք ի նմանէ, զի առաքեսցէ զնորեկաւոր խաղաղութեան, որ եկեալ պահեսցէ զմեզ յերկիւղական գիշերիս, ի դիւական խռովութենէ՝ ամբողջ պահելով զհոգի և զմարմին մեր մինչև ի կատարումն ժամանակի սմաց մերոց: Ամենակալ տէր աստուած մեր՝ կեցուսցէ և տրամեսցի: Զհանգիստ գիշերիս խաղաղութեամբ անցուցանել՝ նաւասով՝ ի տեառնէ խնդրեցուք:

Չհրեշտակ խաղաղութեան պահա։
Չքաւութիւն և զթօղութիւն յան։
Չարբոյ խաչին մեծ և կարող զօրու։
Նե եւս՝ մխաբան վան ճշմարիտ եւ։
Չանձինս մեր և զմիաեանս սեաւն։
Ողորմեաց մեզ, տէր աստուած մեր։

Աղօթք

Տէր աստուած մեր, դու պահեա զմեզ խաղաղութեամբ ի գիշերիս յայսմիկ և յամենայն ժամանակի։ Ընդ սուրբ երկիւղ քո բեւեռեալ պահեա զմիտս և զխորհուրդս մեր։ Որպէս զի յամենայն ժամ քեւ պահպանեալ լիցուք յոտից յիմից թշնամւոյն։ Եւ քեզ հանցուք զօրհնութիւն և զփառս նօր և որդւոյ և հոգւոյդ սրբոյ, այժմ և միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն։

Խաղաղութիւն ամենեցուն։
Աստուծոյ երկիրպագեցուք։

Հրեշտակի խաղաղութեան յանձն առա զանձինս մեր, տէր զօրութեանց, որ հակառակ պատնոյդ զմեզ անխռով ի տուէ և ի գիշերի, յարմնութեան և ի հանգստեան մերում. զի զոր եւս արտին լուսոյ եւ հաստուչ գիշերի։

Եւ այժմ ապաչեմք զքեզ, տէր աստուած մեր, զհանգիստ պիշերիս ընդհետ խաղաղութեամբ անցուցանել, եւ հասանիլ ի սաչոն առաւօտու յերկրպագութիւն եւ ի փառաբանութիւն աւետնաստուրք երրորդութեանդ, այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն:

Սաղմոս Դ.

Խաղաղութեամբ յայս եւ ի սոյն նըն-
ջեսցուք եւ զարթիցուք. զի դու, տէր,
միայն առանձին յուսով քով բնակեցուցեր զմեզ:
Ի կարդալ իմում լուար ինձ, աստուած, քաո արդարութեան. ի նեղութենէ ինձ անդորր արարեր. ողորմեա ինձ եւ լուր աղօթից իմոց:
Որդիք մարդկան մինչեւ յե՞րբ եք խըստասիրտք. ընդէ՞ր սիրէք զնանրութիւն, եւ խնդրէք զստութիւն:
Ծանեայուք զի սքանչելիս արար տէր սրբոյ իւրում. եւ տէր լսիցէ ինձ ի կարդալ իմում առ նա:
Բարկանայք եւ մի մեղանչէք. զոր ինչ ասէք ի սիրտս ձեր՝ յանկողինս ձեր զղջացարուք:

Մատուցէք պատարագս արդարութեան, և յուսացարուք ի տէր։
Բազում ասէին թէ ո՞ ցուցցէ մեզ զբարութիւն տեառն. նշանեցաւ առ մեզ լոյս երեսաց քոց, և էառուր ուրախութիւն սրտից մերոց։
Ի պտղոյ ցորենոյ՝ գինւոյ եւ ձիւթոյ խրնանց լցուցեր զնոսա։
Խաղաղութեամբ յայս և ի այն նոյն ջնացուք և քնարկեցուք, զի դու, տէր, միայն առանձին յուսով քով բնակեցուցեր զմեզ։
Ալէ՛լուիա Օ՛րհի։
Խաղաղութեան աւետեցուն։
Եւ ընդ Հոգւոյդ քո՛ւմ։
Երկիւղածութեամբ լուարո՛ւք։
Արդ աւետարանիս Յիսուսի Քրիստոսի որ ըստ Յովհաննու։
Փա՛ռք քեզ տէր աստուա՛ծ մե՛ր։
Պատո՛ւմէ։
Աստ սո՛ւրբ։

Տէրն մեր Յիսուս Քրիստոս ասէ։

Ա՛մէն ամէն ասեմ ձեզ. եթէ ոչ հատանիցէ ցորենոյ անկեալ յերկիր մեռանիցի, ինքն միայն կայ. ապա եթէ մեռանիցի,

բազում արդիւնս առնէ: Որ սիրէ զանձն իւր՝ արձակէ զնա, և որ ատեայ զանձն իւր յաշխարհիս յայսմիկ՝ ի կեանան յաւիտենական պահեացէ զնա: Եթէ ոք զիս պաշտիցէ, զկնի իմ եկեսցէ, և ուր եան եմ, անդ և պաշտօնեայն իմ եղիցի. եթէ ոք զիս պաշտիցէ, պատուեսցէ զնա Հայրն իմ:

Քարոզ

Փառք քեզ տէր սուրբ ես: Սուրբ խոչիս սպասեցուք զտէր, զի սոխա փրկեսցէ զմեզ ի մեղաց, եւ կեցուսցէ հնարիս ողորմութեան իւրոյ: Ամենակալ տէր սուրբ ես, կեցո և ողորմեա:

Աղօթ

Պահպանեա զմեզ, քրիստոս աստուած մեր, ընդ հովանեաւ սուրբ և պատուական խաչիդ քոյ ի խաղաղութեան, փրկեա յերեւելի և յաներեւոյթ թշնամեացն: Արժանաւորեա զոհութեամբ փառաւորել զքեզ ընդ հօր եւ ընդ սրբոյ հոգւոյդ. այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն:

Անվանիմք առ ինքն քոյ, որպէս առաւածածան, եւ աղաչիմք զանարատ կիսոյդ, չարախօսեա վասն անձանց մերոց, եւ աղաչեա զմեզ ինչ արդիւք վրիժել ի նմանց եւ փրկանաւք եւ յաւետական վտանգից մերոց։

ՄԱՂԹԱՆՔ ՋՕՐԱԻՈՐՔ

ԱՐՀԱԻՐԱՑ ԳԻՇԵՐԱՑՆՈՑ

Սրբոյն Գրիգորի Նարեկացւոյ ասացեալ։

Բան ԺԲ.

Ընկալ քաղցրութեամբ, տէր առատուած հզօր, զդառնացողիս զաղաչանս. մատիր զմտութեամբ առ պատկառեալս զիմօք. վարատեա, ամենապարգեւ, զամօթական տխրութիւնս. քարձ յինէն, ողորմած, զանբեւրելի ծանրութիւնս անչքափառեա, Հնարաւոր, զմահացու կրկռութիւնս. առաքեա, միւռ յաղթող, զխաբողին հաճոյութիւն. քացատրեա, վերնային, զմոլեղեալն մառախուղ. կնքեա, կենցուցիչ, զկորուսեալն ընդմայնանս. ցրուեա, ծածկատեա, զըմբռնողին չար զամանս. խորտակեա, անքնին, զմարտողին զխնդումս։ Ցեառնագրեա քո անուամբդ

զուսանցայց երդ յարկիս. պարիս-
կեա քո ձեռամբդ զառաստաղ տա-
ճարիս. զծապրեա քո արեամբդ զմու-
սեմոց սեանեկիս. կերպացո զքո նչանդ
ի հետս ելից մաղմոսիս. ամրացո քո
աջովդ զհանգստեանս իշտի. մաքրեա-
ցեա ի հաղելից զծածկարան անկողնոյս.
պահեացեա քո կամօքդ զառաւապեալ
անձն ոգւոյս. անխորտակ արասցես
զքո չնորհեալ շունչ մարմնոյս. կա-
ցուսցես չջնջելոյ զպատր զօրուդ երկ-
նային. կարկեացես ի դիմի ընդ եմ
զխաղայն զառաջ: Տուր հանգիստ բնակ-
բուելոյ մտահանդերձիս նիրհման ի
խորհելոյն պիղծիս, բարեխոսու-
թեամբ հոյակապաց սրբոյդ առա-
ջնոցդ՝ և ամենայն բնակելոց:
Աճիմաքեալ պարտեա զպատուհան
մեռելոյն զպղպտութեանց խնա-
մոյ, անզգայտութեան զեռելոյն ի
ծխոյն խոտորելոյ, կենդանա-
կան զգայնոյ, անդիմակաւ հրոյդ,
խօսականաց ցնորից, միշտակաւ քո
յուսոյդ անմեռանելն պաշտպանեալ: Եւ
սիմաքեալ զերասին ի ննջմանէ ծան-
բուելոյն ամենազգաստ սրճնա-
ջեամբ, հոգևնոյդ զառաջելոյն
ի քեզ սրձանացեալ, զոյս ձայն մար-

թանաչ՝ բուսմամբ դատաստ քեզ ա-
ժենօրհնեալ Թագաւոր փրատց ան-
ճառից, փրատբանոցաց երկնապա-
մար խմբից երգակցեալ յերկինս ա-
ռաքել: Զի դու փրատուրեալ ես
յամենայն ախտաճոց յաւիտեանս
յաւիտենից. ամէն:

ԱՂՕԹՔ ՋՕՐԱՒՈՐ

Նորին Սրբոյն Գրիգորի

Բաց ևս..

Որդի աստուծոյ կենդանւոյ օրհնեալ
յամենայնի՝ հօրդ աջոյ նստարի, անքնին
ծնունդ, որ ակտրանոյ առ ի քէն եւ
ոչինչ: Որ ի ծայրէ անստուերն ճշմարիտ
պատմուհանն լոյս փրատց՝ դալին
մեղք. դալածին դեւք. ջնջին յան-
ցանք. խլին կապանք. խորտակին շղ-
թայք. կենդանաճանճին մահոյսեալք.
բժշկին դարուածք. ոչնանան վէրք.
բառնին ապականութիւնք. առ պի տան
ախտութիւնք. նահանջին դեւծութիւնք.
փախուստ խառնին. մեկնի մէգն. ամբի

մառախուղն. փարատի մեայլն. ապառի
ալքամուզքն, վերանայ մուխն. գնայ
գիշերն. տարապիլ տապնապն. չքանան
չարիքն. հալածին յուսահատութիւնքն.
եւ Թագաւորէ ձեռն քո ամենակալ՝
քաւիչդ ամենայնի: Որ ոչ եկիր կո-
րուսանել զմարդկան ոգիս՝ այլ կեր-
ցուցանել. Մոլ ինձ զանձիս չարիս
իմ բազում ոտնձութեամբ: Զի
զոր միայն ես յերկինի անձառ, և յեր-
կրի անբնին, ի տարտ պոյի, և յերգս
ծապաց աշխատին. սիրելն ամենայնի,
և յամենայնի, ամենայն լսմամբ օրհ-
նեալ ի բարձունս. և քեզ բնակ հօր և
հոգւոյդ սրբոյ փառք յաւիտեանս.
ամէն:

ԱՂՕԹՔ ԻՒՐԱՔԱՆՉԻՒՐ ԱՆՁԻՆ ՇԱՒԱՏԱՑԵԼՈՑ Ի ՔՐԻՍՏՈՍ

Զոր արարեալ է Սրբոյ Տեառն Ներսիսի Հայոց Կաթողիկոսի։

Հաւատով խոստովանիմ և երկիւղած պանեմ քեզ, Հայր և որդի և սուրբ Հոգի, անեղ և անմահ բնութիւն, ա- րարիչ հրեշտակաց և մարդկան և ա- մենայն եղելոց. ողորմեա քո արարա- ծոց և ինձ բազմամեղիս։

Հաւատով խոստովանիմ, և երկիւղած պանեմ քեզ, անբաժանելի լոյս, միաս- նական սուրբ երրորդութիւն եւ. մի աստուածութիւն, արարիչ լուսոյ և հալածիչ խաւարի. հալածեա ի հոգ- ւոյ իմմէ զխաւար մեղաց և անգիտու- թեան, եւ լուսաւորեա զիիս իմ ի ժամուս յայսմիկ ապօլժել քեզ ի հա- ճոյս, և ընդունել ի քէն զինդրուածս իմ. և ողորմ։

Հայր երկնաւոր աստուած ճշմարիտ, որ առաքեցեր զորդիդ քո սիրելի ի խնդիր մոլորեալ ոչխարին, մեզայ յեր- կինս և առաջի քո, ընկալ զիս որպէս զանառակ որդին, և զգեցո ինձ զպատ- մուճանն զառաջին զոր մերկացայ մե- ղօք. և ողորմ։

Որդի աստուծոյ աստուած ճշմարիտ, որ խոնարհեցար ի հայրական ծոցոյ, և առեր մարմին ի սրբոյ կուսէն մարիամայ վասն մերոյ փրկութեան, խաչեցար, թաղեցար և յարեար ի մեռելոց, և համբարձար փառօք առ հայր. մեղայ յերկինս և առաջի քո, յիշեա զիս որպէս զաւազակն յոտիւմ գաս արքայութեամբ քով. և ողոր:

Հոգի աստուծոյ աստուած ճշմարիտ, որ իջեր ի յորդանան և ի վերնատունն, և լուսաւորեցեր զիս մկրտութեամբ սուրբ աւազանին. մեղայ յերկինս և առաջի քո, մաքրեա զիս վերստին աստուածային հրով քո՝ որպէս հրեղէն լեզուօք սուրբ զառաքեալսն. և ողոր:

Անճղ բնութիւն, մեղայ քեզ մտօք իմովք, հոգւով և մարմնով իմով. մի՛ յիշեր զմեղս իմ զառաջինս վասն անուանդ քումմ սրբոյ. և ողոր:

Տեսող ամենայնի, մեղայ քեզ խորհրդով բանիւ և գործով. չնչեա զձեռագիւղ յանցանաց իմոց, և գրեա զանուն իմ ի գալստեան կենաց. և ողոր:

Ջննող գաղտնեաց, մեղայ քեզ կամաւ և ակամայ, գիտութեամբ և անգիտութեամբ, թողութիւն չնորհեա մեղաւորիս, զի ի ծննդենէ սուրբ ա-

սազանին մինչեւ ցայսօր մեղուցեալ
եմ առաջի աստուածոյ թերեանդ քո
զգայարանօք իմովք, եւ ամենայն ան-
դամօք մարմնոյս. և ողոյ:

Ամենահնամ տէր, դիր պահապան
աչաց իմոց զերկիւղ քո սուրբ ոչ եւս
հայիլ յայրաստ, և ականջաց իմոց՝ ոչ
ախորժել լսել զբանս չարութեան, և
բերանոյ իմոյ՝ ոչ խօսել զստութիւն,
և սրտի իմոյ՝ ոչ խորհել զչարութիւն,
և ձեռաց իմոց՝ ոչ գործել զանիրա-
ւութիւն, եւ ոտից իմոց՝ ոչ գնալ ի
ճանապարհս անօրէնութեան, այլ ուղ-
ղեա զչարժուածն սոցա լինել միշտ ըստ
պատուիրանաց քոց յամենայնի. եւ
ողոյ:

Հուր կենդանի քրիստոս, զհուր սիրոյ
քո զոր արկեր յերկիր, բորբոքեա
յանձն իմ, զի այրեսցէ զաղտ հոգւոյ
իմոյ, և սրբեսցէ զկիզմ մտաց իմոց,
և մաքրեսցէ զմեղս մարմնոյ իմոյ, և
վառեսցէ լոյս գիտութեան քո ի սրտի
իմում. և ողոյ:

Իմաստութիւն հօր յիսուս, տուր ինձ
իմաստութիւն զբարիս խորհել և խօ-
սել և գործել առաջի քո յամենայն

ժամ. ի չար խորհրդոց, ի բանից և ի գործոց վրկեա զնս. և ողոր:

Կամեցող բարեաց տէր կամարար, մի թողուր զնս ի կամս անձին իմոյ գնալ, այլ առաջնորդեա ինձ լինել միշտ ըստ կամաց քոց բարեսիրաց. և ողոր:

Աւրքայ երկնաւոր, տուր ինձ զարքայութիւն քո զոր խոստացար սիրելեաց քոց, և զօրացո զսիրտ իմ առեալ ըզմեզս, և սիրել զքեզ միայն, և առնել զկամս քո. և ողոր:

Խնամող արարածոց, պահեա նշանաւխաչի քո զհոգի և զմարմին իմ ի պատրանաց մեղաց, ի փորձութենէ դիւացց, և ի մարդոց անիրաւաց, և յաւիտենական վտանգից հոգւոյ և մարմնոյ. և ողոր:

Պահապան ամենայնի քրիստոս, աջ քո հովանի լեցի ի վերայ իմ ի տուէ և ի գիշերի, ի նստիլ ի տան, ի գնալ ի ճանապարհ, ի ննջել և ի յառնել, զի մի երբեք սասանեցայց. և ողոր:

Աստուած իմ, որ բանաս զձեռն քո, եւ լնուս զամենայն արարածս ողորմութեամբ քով. քեզ յանձն առնեմ զանձն իմ. զու հոգա և պատրաստեա

զպետս հոգւոյ և մարմնոյ իմոյ յայսմհետէ մինչև յաւիտեան. և ողորմ։

Դարձուցիչ մոլորելոց, զարձո զիս ի չար սովորութենանց իմոց ի բարի սովորութիւն, և բեւեռեա ի հոգի իմ զսոսկալի օր մահուն, և զերկիւղ գեհենոյն, եւ զսէր արքայութենանն, զի զղջացայց ի մեղաց, և գործեցից զարդարութիւն. և ողոր։

Աղբիւր անմահութեան, աղբերացո ի սրտէ իմմէ զարտասուս ապաշխարութեան որպէս պոռնկին, զի լուացից զմեղս անձին իմոյ յառաջ քան զելանելն իմ յաշխարհէս. և ողոր։

Պարգեւիչ ողորմութեան, պարգեւեա ինձ ուղղափառ հաւատով, եւ բարի գործով, եւ սուրբ մարմնոյ եւ արեան քո հաղորդութեամբ գալ առ քեզ. և ողոր։

Բարեւսար ոէր, հրեշտակի բարւոյ յանձն արասցես զիս քաղցրութեամբ առանդել զհոգի իմ, և անխռով անցուցանել ընդ չարութիւն այսոցն, որ են ի ներքոյ երկնից. և ողոր։

Այս ճշմարիտ քրիստոս, արժանաւորեա զհոգի իմ ուրախութեամբ տեսանել զլոյս փառաց քոց ի կոչման

աւուրն, և հանիցէ յաւտար բարեաց յօժելիսանս արդարոց մինչև յօր մեծի դատաստան քո. և ողորմ:

Գառուրդ արդար, յորժամ գան փառաւոր Տօր գառնել վրէժխնդրանին և զմեռեալս, մի մոռանիր ի դատաստան քում ծառայի քում, այլ միսիթար զիս ի յաւիտենական Տրոյն, եւ լսելի արա ինձ պրանալ կոչումն արդարոց յերկնից արքայութիւնդ. և ողորմ:

Ամենորդ տէր, որդիա ամենայն հաւատացելոց ի քէն, խոնդ և օտարոց, ծանօթից և անծանօթից, կիներ գանեաց և մանկանց. չորսիսա և զբաւնամեաց խոնդ եւ առելեաց զմարդելիսն որ առ ի յանցանացն, և զարձո զնոսա ի չարեացն զոր ունին վասն իմ, զի ողորմածեան քում առ՝ անի եղիցին. և ողոր:

Փառաւորեալ տէր, ընկալ զաղաչանս ծառայիս քո, եւ կատարեա ի բարի զինդրուածս իմ. բարեխօսութեամբ արդարոց ատեանդ ծանիցեն, եւ յաւիտեան վայելեն, եւ արքայ զրկողի մեզ լսելոյ լուսաւորչին, եւ արդ առաքելոց, մարգարէից, վարդապետաց, մարտիրոսաց, Տպրատեսաց, ճգնաւո-

լաց, կուսանաց, և ամենայն սրբոց քոց երկնաւորաց և երկրաւորաց: Եւ քեզ փառք և երկրպագութիւն անբաժանելի սուրբ երրորդութեանդ, յաւիտեան յաւիտենից. ամէն:

Մաղթանք

Վասն սրբոյն աստուածածնին բարեխօսութեան, տէր, ընկալ զաղաչանս մեր, և կեցո զմեզ:

Քարոզ

Սուրբ աստուածածնին և ամենայն սուրբս բարեխօս արասցուք առ Տայր ի յերկինս, զի կամեցեալ ողորմեցի, եւ զմոցեալ կեցուսցէ զարարածս իւր: Ամենակալ տէր աստուած մեր, կեցո և ողորմեա:

Աղօթք

Ընկալ, տէր, զաղաչանս մեր բարեխօսութեամբ սուրբ աստուածածնին առաքելոցդ ծնողի մոյնի սրբոյ քո, եւ սրբոց այսոր է յիշատակ (կամ) սուրբ հնոյն: Լսելի մեզ, տէր, և ողորմեա. հնարեա բանիս եւ մտոյ զմեզ մեր:

Արժանաւորեա զոհութիւնս փառաւորել զքեզ ընդ որդւոյ և ընդ սրբոյ Հոգւոյդ. այժմ եւ միշտ եւ յաւիտեան յաւիտենից. ամէն:

Օրհնեալ տէր մեր Յիսուս Քրիստոս. ամէն:

Հայր մեր որ յերկինս:

Մաղթանք

Զհանգստեան զաղօթս և զաղաչանս ընկալ, մարդասէր աստուած, ի հաճոյս բարեբար կամաց քոց, և մեր մեղաց և բազում յանցանացն Թողութիւն շնորհեա. և քեզ փառք յաւիտեան. ամէն:

Փառք քեզ, տէր աստուած մեր, որ պարգեւեցեր զօրս զայս բարեաւ եւ խաղաղութեամբ անցուցանել:

Մարդասէր աստուած, զառաջակայ գիշերս որ ի մերոյ մեր գալոց է, ի մոգաց փրկեա, ի չարեաց ազատեա, և ի գործս բարիս առաջնորդեա:

Առաւօտս օրհնութեանցն և փառաբանութեանցն արժանի արա զամենայն հաւատացեալս անուանդ քում սրբոյ, և պահեա ի խաղաղութեան:

Տէր ասասած մեր, տուր զքո խաղաղութիւնդ ամենայն աշխարհի, բարձ պատուճն և պատուհասն ի յարուածոց:

Ողորմեա հոգւոց և եղբարց մերոց կենդանեաց և հանգուցեալոց:

Ողորմեա վիհերեցի հիմաղաց, երախասուորաց, պտղաւորեալ, սպասաւորաց, և այնոցիկ՝ որք ընդ հովանեաւորեալ եկեղեցւոյ են հանգուցեալ:

Տէր ասասած, օգնեա ծաղաւորացն քրիստոնէից, և իշխանացն բարեպաշտաց, զօրաց և պատերազմաց նոցին՝ պատճառ ի խաղաղութեան:

Տէր ասասած մեր, պահեա զասաջնորդս և զերիցսրմեհնս մեր ամբողջ և անխոտոր ի կամն սրբութեան քոյ:

Աչառու սուրբ և սրասուական խաչիդ քոյ՝ հալածեա զերեսելի և զանեղուսեալ ծայլ ծշնամին ի սահմանաց մերոց և ի բնակութենէս մերմէ:

Փրկեա զմեզ ի հոգւոյ յաւիտենից, և զերկ մասք յաւիտեան. ամէն:

Որհնեալ եղերութ ի հնարհաց սրբոց հոգւոյն, երկայրք, հանդերձեալ խաղաղութեամբ, և սէր եղբոյի ընդ ձեզ ընդ ամենեսեան. ամէն:

ԱՂՕԹՔ

ՎԱՍՆ ՆՆՋԵՑԵԼՈՑ

Աղաչեմ և խնդրեմ ի քէն ս՛վ բազմագութ Աստուած՝ վասն ապրիս մերոյ հնոց և նորոց և համօրէն հաւատով և յուսով ի քեզ ննջեցելոցն։ Եւ մանաւանդ՝ վասն իմոց մարմնաւոր և հոգևոր ծնողաց, եղբարց, քերց, ազգականաց, սիրելեաց, ի բարիս կրթողաց և ուսուցչաց, և բարեկամաց, և հոգևոր վարդապետաց և ամենայն աշխատաւորաց եւ երախտաւորաց մերոց ի քեզ ննջեցելոց։ Զորս յիշեցես յողորմութիւնս քո յաւուր մեծի գալստեան քո. թողութիւն շնորհեացես ամենայն մեղաց եւ սխալանաց նոցին. եւ դասեացես ընդ սուրբս քո յաջակողմանն դասուն. եւ տացես լսել զերանելեաց բարբառն քո թէ՝ եկա՛յք օրհնեալք Հօր իմոյ. և քան երախտեաց նոցին՝ որ առ մեզ՝ միոյն բիւրապատիկս հատուցես ի հոգիս նոցա. և զմեզ անպատապարտ արասցես ի նոցին պարտուցն. և քեզ փառք յաւիտեանս յաւիտենից. Ամէն։

ԱՂՕԹՔ
ՏԷՐՈՒՆԱԿԱՆ

Որպէս պատուիրէ Փրկիչն մեր.

«Ցորժամ կայցէք յաղօթս,
մի՛ շատախօսք լինիք»:
(ՄԱՏԹ. Զ. 7)

Հա՛յր մեր, որ յերկինս ես, սուրբ եղիցի անուն քո: Եկեսցէ արքայութիւն քո. եղիցին կամք քո որպէս յերկինս և յերկրի: Զհաց մեր հանապազորդ տո՛ւր մեզ այսօր: Եւ թող մեզ զպարտիս մեր, որպէս և մեք թողումք մերոց պարտապանաց: Եւ մի՛ տանիր զմեզ ի փորձութիւն. այլ փրկեա՛ զմեզ ի չարէ: Զի քո է արքայութիւն, և զօրութիւն, և փառք յաւիտեանս. Ամէն:

ՎԵՐՋ

Imprimerie Moderne de Dreux - ✆ 37 46 12 78

Diffusion : Église Arménienne
15, Rue Jean Goujon
75008 PARIS